



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԹՂԹԱԿՑԻ ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՏ

Մայիսի 24-ին Հայաստանի հեռագրական գործակալության թղթակիցը մի շարք հարցերով դիմեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին: Նորին Ս. Օծությունը վեհարանում բարեհաճեց ընդունել թղթակցին և պատասխանեց նրա հարցերին:

ՀԱՐՑ — Արտասահմանյան հայկական որոշ թերթերից մեզ հայտնի է դարձել, որ Թեհրանի Հայոց Թեմական Պատգամավորական ժողովը վերջերս որոշել է անշատվել Մայր Աթոռ Ս. էջմիածնից և միանալ Անթիլիասի եկեղեցական կենտրոնին: Որքա՞ն ստույգ է այս տեղեկությունը:

ՊԱՏԱՍԽԱՆ. — Տեղեկությունը, գծրախտարար, համապատասխանում է իրականության: Մի քանի օր առաջ ստացանք նման բովանդակությամբ մի գրություն Թեհրանի հայոց Թեմական խորհրդից, որին ի պատասխան Մայր Աթոռը հեռագրով հայտնեց իր վերաբերմունքն այդ որոշման առթիվ:

Մեեն հայտնեցինք, որ Մայր Աթոռը չի կարող համաձայն լինել այդ որոշման, քանի որ Պատգամավորական ժողովը ոչ մի իրավասուրյուն չունի հայեկեղեցիների և հավատացյալների հոգեւոր կապը խօսելու Ս. էջմիածնից:

Մեր հեռագրով հաղորդեցինք Թեմական խորհրդին և Պատգամավորական ժողովին՝ մնալ խալաղ ու լավատես և շկատարել որևէ ձեռնարկ՝ դիմելու այլ եկեղեցական կենտրոնի:

Մեեն վստահ ենք, թե ամեն դժվարություն կիալբանարվի և Ս. էջմիածինը, իրեւ հոգեւոր կենտրոն, իր դարավոր նովաճին կպահպանի Երանի դրացի և բարեկամ պետության մեջ գործող հայ եկեղեցիների վրա, հարգելով իրանական պետական օրենքները:

Իրանի հայ քեմերը, ինչպես անցյալում զարեւ շարունակ, այսումետև ևս կմնան Մայր Աթոռ Ս. էջմիածնի հոգեւոր իշխանության ներքո:

ՀԱՐՑ — Որո՞նք են Թեհրանի Պատգամավորական ժողովի այդ որոշման դրդապատճառները:

ՊԱՏԱՍԽԱՆ. — Որպես գլխավոր պատճառ մատնաշվում է իր Իրանի կառավարության 1949 թվականի որոշումը, որի համաձայն ազգային փորձամանությունների կրնապետները պետք է իրանահպատակ բաղադրիներ լինեն: Իրանի կառավարության որոշումը միանգամայն բնական է և հասկանալի: Սա-

կայն, դրանից բնակ չի հետևում, որ Թեհրանի քեմը չի կարող այլս. Եշմածնի հոգեուր հովանապորարյան տակ գտնվել:

Արտասահմանյան մեր մի շարք քեմերը, ինչպես, օրինակ, Ռումինանայ քեմը, տասնյակ տարիներից ի վեր հովանախսի պետական օրենքների հերքու են զործում: Այդ օրենքները արգելվ չեն հանդիսացել, որ հիշյալ երկրների հայ եկեղեցիները հոգեուր իմաստով ենրակա լինեն բազմազարյան Ս. Եշմածնին, որը, ինչպես ամբողջ աշխարհին հայտնի է, զլուսն է Հայ Եկեղեցու և կենտրոնի հայոց սուրբ հովանախսի, Դ դարի սկզբից ի վեր: Մայր Արոռը հարգել է և հարգում է Իրանի պետական օրենքները, որոնք երեք արգելվ չեն հանդիսացել, որ Ս. Եշմածնինը իր դարավոր հոգեուր կապերը պահպանի իրանակայ քեմերի հետ: Եվ իրոք, 1949 թվականից մինչև այսօր, Մայր Արոռի հարաբերությունները իրանակայ քեմերի համար հարգանակ քեմերին է հոգեուր գործակալ արժանապատիկ է: Հովհաննես ավագ քահանա Հանյանից ստացել ենք տեղիկագրեր, զեկույցներ, վիճակարական տեղեկություններ քեմի զործունենության և եկեղեցիների մասին: Թղթակցությունների առարկա են եղել նաև ամուսնական և ժառանգական հարցեր, շնորհաբաշխություններ և պարզեառություններ իրանակայ ազգային բարերարենքի և այլն: Թեհրանի Թեմական խորհրդի մշենորդագրին ի պատասխան վերջին պարզեառությունը տեղի ունեցալ անցյալ օգոստոսին, երբ Մենք Ս. Գրիգոր Լուսավորչի շքանշանով պարզեառարեցինք ազգային բարերար Մարգար Մարգարյանին: Անցյալ աշնան Թեհրանի Թեմական խորհրդից ստացան նվերներ հոգեուր ձևմարանի մեր սաների համար:

Այս բալորը ցույց են տալիս, որ Մայր Արոռի և Թեհրանի քեմի կապերը եղել են բնականն և բավականին սերտ՝ փոխադարձ սիրու և հարգանքի պայմաններում:

ՀԱՅՑ— Ինչքա՞ն ժամանակ է, որ Թեհրանի թեմը առաջնորդ չունի, և ի՞նչ է արել Մայր Արոռը այդ կապակցությամբ:

ՊԱՏԱՍԽԱՆ— Թեհրանի քեմը 1949 թվականից ի վեր առաջնորդ չունի: Մայր Արոռը միշտ գրադիւնի է քեմի առաջնորդի ընտրության հարցով, առաջնորդվելով Հայ Եկեղեցու կանոններով և Իրանի օրենքներով: Համաձայն մեր Եկեղեցու կանոնների, Թեմական Պատգամավորական ժողովն ընտրում է հայ հոգեուրականի, որ լինի Իրանի քաղաքացի: Ընտրության մասին հայտնվում է Ս. Եշմածնին Ամենայն Հայոց Կարողիկոսին ի գիտություն և ի հաստատում:

Առաջնորդվելով այս ոգով և հարգելով Իրանի կառավարության 1949 թվականի որոշումը, Մենք անցյալ տարի առաջարկեցինք Թեհրանի հայոց հոգեուր գործակալ Տ. Հովհաննես ավագ քահանա Հանյանի քեկնածությունը իրեւ քեմակալ առաջնորդի, որին, ի դեպ, կարող էինք վարդապետական վելար տալ այդ առքիվ: Թեմական խորհրդը և Թեմական Պատգամավորական ժողովի դիվանը առանձին-առանձին Մեզ պատասխանեցին շատ հարգալիր կերպով և Երախտագիտական զցացումներով, քեւ Մեր առաջարկությունը անպայման ի նկատի կառնվի առաջիկային: Անք քեզ ինչու Թեհրանի Պատգամավորական ժողովի՝ եշմածնից անշատվելու որոշումը մնում է անբացարելի:

ՀԱՅՑ— Ի՞նչ հեռանկար եք տեսնում Թեհրանի թեմի Պատգամավորական ժողովի հիշյալ որոշման կապակցությամբ:

ՊԱՏԱՍԽԱՆ— Ի պատասխան Թեհրանի Թեմական խորհրդի 1958 թվականի մարտի 29-ի նամակի, Մայր Արոռը մայիսի 3-ին իր խոսքը ուղղեց Թեմական խորհրդին, Թեմական Պատգամավորական ժողովին և համայն ժողովի՝ եշմածնից անշատվելու որոշումը մնում է անբացարելի:

ա) Խրանի մեր երեք բեմերը, այդ բվում նաև Թեհրանի բեմը, իրենց եկեղեցիներով և հավատացյալ ժողովրդով, եղել են, կան և կմնան Մայր Արռան էջմիածնի հոգեւոր իշխանության ներքեւ:

բ) Ազգային-եկեղեցական որևէ մարմին իրավասու չէ Հայաստանյայց եկեղեցիներն ու հավատացյալները բաժանելու իրենց դարավոր կենտրոն Մայր Արռան Ս. էջմիածնից:

գ) Հայ եկեղեցին ուրիշ Գրուս չունի, բացի Ս. էջմիածնի Ընդհանուրական Հայրապետ Ամենայն Հայոց Կարողիկոսից: Հայ եկեղեցու մյուս Արռողջերը, ինչպիսիք են Կիլիկյան Կարողիկոսական Սրոոր, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Պատրիարքական Արռոները և առաջնորդական արքոնները անդամներ են Հայ եկեղեցու, և ամեն մեկը իր շափով ենրակա է Մայր Արռոին: Կանոնական-իրավական տեսակետից, և սուրբ ավանդությանց ու պատմական իրավասուրյանց լույսի տակ, հնարավոր չէ անշատմել Ս. էջմիածնից և կապվել այլ եկեղեցական կենտրոնի: Խրանահայ եկեղեցիներն ու ժողովուրդը, Հայաստանյայց եկեղեցու մեջ մնարով, կարող են ունենալ միմիայն մի վերին հոգեւոր կենտրոն, այն է Ամենայն Հայոց Մայր Արռան Ս. էջմիածները, հիմնված 301 րվականին Հայոց եկեղեցու ծնունդով:

դ) Մայր Արռոր կոչ արեց Թեմական Պատգամավորական ժողովի անդամներին և Խրանի հայ հավատացյալ ժողովրդին՝ բյութմացության արդյանք նկատել վերջին ժողովի որոշումը Մայր Արռորից բաժանվելու մասին, մետս կոչել այն, թեառել բեմակալ առաջնորդ համաձայն իրանական պետական օրենքների և բեմական կանոնադրության ու շարունակել մնալ հավատարիմ և հոգեւոր կանոնադրության ու պատվածակառույց Ս. էջմիածնին:

